ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԻԿԻ

ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

(ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Թ. 00.01- Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Զաքարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ.Մանուչարյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թ.Վ. Տոնոյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. հունիսի 26-ին՝ ժամը 13:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ.Ա. Սողոմոնյան

Թեմայի հրատապությունն ու արդիականությունը: Ժամանակակից աշխարհում մի կողմից լայն հնարավորություններ են ստեղծվում տարբեր պետությունների ու ազգերի միջև երկխոսության կայացման և սոցիոմշակութային պատնեշների հաղթահարման համար, մյուս կողմից՝ մշակութային համահարթեցման գործընթացները, բարոյական արժեհամակարգերի փոխակերպումները, համամարդկային արժեքների ընդհանուր հարթակի ձևավորման միտումները հրատապ են դարձնում համամարդկայինի մեջ ազգային ինքնության պահպանման ու արդիականացման խնդիրները: Համաշխարհայնացման գործընթացներին զուգահեռ՝ օրեցօր ավելանում են էթնիկական և կրոնական հիմքի վրա տեղի ունեցող հակամարտությունները: Համատարած փոփոխությունների և փոխակերպումների հետևանքով առաջացած խառնաշփոթը նպաստում է «ինքնութենական խուճապ»-ի տարածմանը, հատկապես, երբ արագ կողմնորոշվելու անհրաժեշտությունը մեծանում է և փոփոխությունների հորձանուտում ավելի է խորանում ինքնության ճգնաժամը: Այսպիսի պայմաններում «Ես»-ն առավել քան երբևէ «Մենք»-ի պաշտպանության կարիքն ունի: Այսպիսով, հարափոփոխ իրականության մեջ տարատեսակ մարտահրավերներին դիմակայելու համար անխուսափելի են դառնում ազգային ինքնությանն առնչվող պատմական ու տեսական հարցերի քննարկումը, անհատական ու ազգային ինքնության կերպափոխումների իմաստավորումն ու արժևորումը: Ազգային ինքնության հիմնախնդիրը հայերիս համար կարևոր է նախ և առաջ այն պատճառով, որ մեր հայրենակիցների զգալի մասն ապրում է հայրենիքից հեռու, որտեղ ձուլվելու վտանգն առավել մեծ է: Նույն խնդիրը ծառացած է նաև հայրենիքում ապրող հայ հասարակության այն հատվածի առջև, որն անհաղորդ է ազգային արժեքներին:

Հայտնի է, որ ազգային ինքնության համակարգը բազմաշերտ է և ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնցից են մարդաբանական որոշակի գծերը, հոգեկերտվածքը, լեզուն, կրոնը, մշակույթը և այլն: Ինքնության կառուցվածքում մեծ նշանակություն ունի նաև պատմական հիշողությունը, որով իմաստավորվում է տվյալ ազգի անցյալը և հյուսվում նրա ինքնության «ոստայնը»: Այդ հիշողության մեջ ամրակայվում են ոչ միայն անցյալում կատարված իրադարձությունները, այլև պատմական իրողությունների սեփական ընկալումներն ու իմաստավորումները: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է թե՛ գրավոր և թե՛ բանավոր պատմությանը, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնության պահպանման և իմաստավորման սեփական կերպը: Բանավոր հիշողությունում լավագույնս արտացոլվում է այն ամենը, ինչը հայտնվել է պատմագրության լուսանցքում: Այս իմաստով բանահյուսության նշանակությունն անուրանալի է, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել ինքնության խորքային շերտերը, որոնք, դուրս մնալով գրավոր պատմության էջերից, դրսևորվել են մշակույթի մեջ որպես առասպել, հեքիաթ, էպոս և այլն: Դիմակայելով ժամանակի կործանիչ ազդեցությանը՝ դրանք չեն մոռացվում, այլ փոխանցվում են

սերնդեսերունդ՝ հանդես գալով իբրև հավաքական ինքնության յուրօրինակ «այցեքարտ»: Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում՝ ատենախոսության մեջ ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը[1]: Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը՝ իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված խորհուրդներով, որոնք կարոտ են գաղտնազերծման և բազմակողմանի քննության: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության արքետիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում՝ փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Չնայած հազարամյակների պատմություն ունենալուն՝ հայկական էպոսը, որը հայտնի է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» անվամբ, գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել միայն սկսած XIX դարավերջից: Հայկական էպոսի ուսումնասիրությունների ռահվիրան և նախակարապետը Գարեգին Սրվանձտյանցն է, որն էպոսը գրի է առել 1874 թվականին՝ «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» խորագիրը կրող գրքույկում: Էպոսի գրառումից հետո սկսվեցին որոնումներ և տարբեր սերունդների բանահավաքների կողմից գրառվեցին շուրջ 160 նոր պատումներ: Թեև հայկական էպոսի ուսումնասիրությունների հետագա ընթացքը եղել է բավականին արգասաբեր, այդուհանդերձ այսօր էլ առկա են որոշակի տարաձայնություններ հայկական էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակային մեկնաբանությունների առնչությամբ:

---

[1]Որպես ուսումնասիրության սկզբնաղբյուր օգտագործվել է էպոսի համահավաք տեքստը՝ «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոս, Մ. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի աշխատասիրությամբ, Եր., 1961:

Ատենախոսության մեջ էպոսի վերաբերյալ հրապարակի վրա գտնվող ուսումնասիրությունները դասակարգվում են երեք խմբերում՝ բանասիրական-գրականագիտական, իմաստասիրական և հոգեբանական: Բանասիրական-գրականագիտական բնույթի ուսումնասիրությունները միտված են բացահայտելու էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակության, տիպաբանական և ժանրային հատկանիշները (**Գ. Սրվանձտյանց**, **Մ. Աբեղյան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Հ. Օրբելի, Բ. Խալաթեանց, Ստ. Կանայան, Կ. Մելիք-Օհանջանյան, Գր. Գրիգորյան** և ուրիշներ): Հայկական էպոսի նկատմամբ բանասերների, գրականագետների ու մշակութաբանների ուշադրությունը չի մարել նաև վերջին տասնամյակներում և շարունակվում է մինչ օրս (**Ա. Եղիազարյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, Լ. Աբրահամյան, Ա. Պետրոսյան, Լ. Խեչոյան, Թ. Տոնոյան, Ս. Ավետիսյան, Հ. Համբարձումյան** և ուրիշներ): Վերջին տասնամյակում ՀՀ-ում կազմակերպվում են պարբերական գիտաժողովներ՝ նվիրված հայկական էպոսի ուսումնասիրությանը, որոնցից առավել արժանահիշատակ է «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» խորագրով գիտաժողովը, որի ընթացքում քննարկվել են էպոսագիտական հարցեր, մասնավորապես՝ հայկական էպիկական ավանդույթների պատմությունը, տարբեր ժողովուրդների էպիկական ժառանգությունը, կատարվել են համեմատական վերլուծություններ և զուգահեռներ են անցկացվել հայկական ժողովրդական էպոսի առնչությամբ:

Ուսումնասիրությունների երկրորդ խմբում ընդգրկված են այն աշխատանքները, որոնցում լուսաբանվել ու արժևորվել են հայկական էպոսի իմաստասիրական, բարոյահոգեբանական շերտերը, խորհրդանիշային, թաքնագիտական իմաստները և էպոսի ուրույն դերակատարությունն ազգային ինքնության հարացույցում (**Գ. Նժդեհ, Է. Աթայան, Ա. Ոսկանյան, Ս. Զաքարյան, Ա. Արմին**, **Ս. Մանուկյան** և ուրիշներ): Հարկ է նկատել, որ փիլիսոփայական տեսանկյունից էպոսի ուսումնասիրությունը նոր հորիզոններ է բացում ազգային ինքնության ու հոգեկերտվածքի բացահայտման բազմաբարդ գործընթացում, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում էպոսում արտացոլված փիլիսոփայական աշխարհայացքի վերհանմանն ու վերլուծությանը:

Հայկական էպոսին նվիրված երրորդ խմբի հետազոտություններում (**Գ. Շահվերդյան**, **Ս. Մարգարյան** և ուրիշներ) փորձ է արվել հայկական էպոսը վերլուծել հոգեբանության դիրքերից, մասնավորապես՝ հետաքրքրական են Կ. Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականի արքետիպերի տեսության շրջանակներում կատարված հետազոտությունները, որոնք նոր լույսի ներքո են ներկայացնում էպոսում տեղ գտած իրադարձություններն ու կերպարները:

Հետազոտության օբյեկտը հայոց ինքնությունն է, **առարկան՝** հայոց ինքնության դրսևորումները «Սասնա ծռեր» հայկական էպոսում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է նախորդ արժեքավոր ուսումնասիրությունների արդյունքների ամփոփմամբ, նոր հարցադրումների ու հետազոտական մոտեցումների տեսանկյունից փիլիսոփայական վերլուծության ենթարկել հայկական «Սասնա ծռեր» էպոսը, վերհանել էպոսի իմաստասիրական, արժեքաբանական, բարոյագիտական շերտերը և հայոց հոգեկերտվածքի արքետիպային գծերը: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր լուծել հետևյալ խնդիրները.

- Բացորոշել ատենախոսության համար ելակետային նշանակություն ունեցող հասկացությունները:
- Էպոսագիտության մեջ հայտնի պատմական և դիցաբանական դպրոցների հայեցակարգային դրույթների համատեքստում վերլուծել «Սասնա ծռեր» էպոսը, պարզել նրա պատմական ու դիցաբանական շերտերի հարաբերակցությունը:
- Լուսաբանել էպոսի ծագման, առասպելի և էպոսի փոխհարաբերության հարցերը, վերլուծել դրանց վերաբերյալ էպոսագիտական հիմնական հայեցակարգերը:
- Հայոց ինքնության արդիականացման համատեքստում իմաստավորել հայկական էպոսում արտացոլված իմաստասիրական՝ գոյաբանական, մարդաբանական, արժեքաբանական ու բարոյագիտական գաղափարները:
- Կ. Յունգի կոլեկտիվ անգիտակցականի արքետիպերի տեսության որոշ դրույթների համատեքստում կամ դրանց մեթոդաբանական դիրքերից վերլուծել «Սասնա ծռեր»-ում դրսևորված հայոց ինքնության արքետիպային շերտերը:
- Հայկական էպոսի ճյուղերի գլխավոր հերոսների կերպարների ու վարքագծի վերլուծության միջոցով ներկայացնել հայոց հոգեկերտվածքի արքետիպային գծերի ու հայոց հոգեբարոյական նկարագրի առավել ամբողջական պատկերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական ու փիլիսոփայական մեթոդները՝ պատմահամեմատական, տրամաբանական (ինդուկցիա և դեդուկցիա, վերլուծություն ու համադրություն, համանմանություն, վերացարկում, ընդհանրացում), դիալեկտիկական, այնպես էլ ազգային ինքնության ուսումնասիրության պրիմորդիալիստական (էութենապաշտական, գոյաբանական) և կոնստրուկտիվիստական մոտեցումները, որոնք հնարավորություն են ընձեռել բացորոշել ազգային ինքնության էութենական բովանդակությունը, նորովի ուսումնասիրել «Սասնա ծռեր» էպոսը և բացահայտել նրանում արտացոլված փիլիսոփայական գաղափարներն ու ազգային ինքնության արքետիպային դրսևորումները: Ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել նաև ազգային ինքնության փիլիսոփայական, հոգեբանական, ազգաբանական, մշակութաբանական հետազոտությունները:

Գիտական նորույթը: Էպոսը դիտելով որպես ազգային ինքնության «հայելի», վերլուծելով հայոց ինքնության դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում, առաջնորդվելով էպոսի ուսումնասիրության տարբեր մեթոդների համադրմամբ՝ առաջադրվել և հիմնավորվել են գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք դրույթներ, որոնցից առավել կարևորներն են՝

➢ Հայկական էպոսի հումանիստական «գաղափարախոսությունը» գերազանցապես խարսխված է բարոյական արժեքների վրա, ի մասնավորի՝ էպիկական հերոսների վարքը կարգավորվում է ավանդականացված բարոյական սկզբունքներով ու կանոններով և բարոյականության, գլխավորապես՝ պարտքագիտական բարոյականության ոսպնյակով են իմաստավորվում իրականությունը, մարդ-բնություն, մարդ-մարդ, «Մենք-Նրանք» հարաբերությունները:

➢ Հայկական էպոսում արտացոլվել են հայոց նկարագրի թե՛ դրական (ազատատենչություն, բարություն, մարդասիրություն, խաղաղասիրություն և այլն) և թե՛ բացասական (անտարբերություն և անփութություն ազգային արժեքների նկատմամբ, ծառայամտություն, պետականամետ մտածողության, հերոս-ժողովուրդ կապի բացակայություն և այլն) ինքնութենական գծերն ու կեցվածքները:

➢ «Սասնա ծռեր» էպոսում, գլխավորապես՝ էպոսի առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղում, արտացոլվել են բնություն-մարդ փոխհարաբերությանն աղերսվող գոյաբանական, մասնավորապես՝ ջրի՝ որպես գոյի նախահիմքի ու հիմնագոյացության, ինչպես նաև ջրի խորհրդանշանների մասին պատկերացումները:

➢ «Սասնա ծռեր» էպոսում դրսևորվել են հայոց ինքնությանը բնորոշ Փրկիչ-հերոսի, «նիրհող» ինքնության, սահմանային իրավիճակներում արթնանալու և գործելու, չարիքի ու անարդարության դեմ ընդվզելու արքետիպային գծերը: Մասնավորապես՝ Ագռավաքարում Փոքր Միհերի փակվելը խորհրդանշում է ոչ թե փախուստ կամ օտարում սեփական ինքնությունից, այլ մետաֆիզիկական ընդվզում անարդար աշխարհակարգի դեմ: Հայկական էպոսում անարդար ու չար աշխարհի մասին եղած հոռետեսական մտայնությունը չի հանգում էկզիստենցիալ ոչնչապաշտության: Փոքր Միհերի կերպարում մեկտեղվել են հայոց հոգեկերտվածքի հակասական գծերը՝ իրենց դրամատիկական հարաբերություններով, անարդար ներկայի մերժմամբ և լուսավոր ապագայի ու անմահանալու հույս-հավատով:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Պաշտպանության են ներկայացվում հետևյալ տեսական դրույթները՝

➢ «Սասնա ծռեր» հայկական էպոսը, իբրև առասպելականի և պատմականի ներդաշնակ միասնություն, ամփոփել է հայոց ինքնության թե՛ հուզական-

երևակայական ընկալումների և թե՛ ռացիոնալ-ճանաչողական ըմբռնումների առանձնահատկությունները:

➢ «Սասնա ծռեր» էպոսում հայոց հոգեկերտվածքն ուսումնասիրվում է առասպելական, բնազանցական և պատմական գործոնների համատեքստում: Մի կողմից դա հնարավորություն է տալիս բացահայտելու հայոց ինքնության արքետիպային գծերը, մյուս կողմից՝ միմյանց ու այլոց հետ հարաբերվելու հայի աշխարհըմբռնման առանձնահատկությունները, ինչպես նաև աշխարհի և դրանում մեր տեղի ու դերի մասին պատկերացումները:

➢ «Սասնա ծռեր» էպոսում արտացոլվել են «*արդար աշխարհի մասին առասպելի*» մերժման ինքնութենական կեցվածքն ու անմահության մասին (հավերժական հայը) կենսահաստատ հավատը:

➢ «Սասնա ծռեր» էպոսում դրսևորվել են հայոց «*նիրհող» ինքնության* և *ինքնութենական գոյապահպանման* արքետիպային գծերը, որոնցից առաջինին հատուկ է իրականության անշրջահայաց ընկալումը, իսկ երկրորդին՝ սահմանային իրավիճակներում ինքնության «կանչին» արձագանքը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հայկական էպոսի ուսումնասիրությունն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Ատենախոսության մեջ քննարկվում են ազգային ինքնությանն առնչվող այնպիսի հարցեր, որոնք չափազանց կարևոր են հայոց ինքնության ուսումնասիրության համար: Նորովի է ներկայացվում էպոսի մարդասիրական, հայրենասիրական, դաստիարակչական նշանակությունը: Ատենախոսության որոշ դրույթներ և մոտեցումներ կարող են օգտակար լինել փիլիսոփայության, էթնիկական հոգեբանության, գրականագիտության, ազգային ինքնությանը նվիրված հատուկ դասընթացներում, ինչպես նաև հիմք հանդիսանալ նշված թեմայի հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության փորձաքննությունը*:* Ատենախոսության նախնական տարբերակը քննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի 2019 թ-ի փետրվարի 20-ի նիստում, իսկ նույն ամբիոնի 2019 թ-ի ապրիլի 17-ին կայացած նիստի ընթացքում ատենախոսությունը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության հիմնական դրույթները և գաղափարները ներկայացվել են՝

1. ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի սեմինար քննարկումներում (2010-2014 թթ.)

2. Հասարակական և հումանիտար գիտությունների գիտաժողովում (Ավստրիա, Վիեննա, ապրիլի 18-23, 2015 թ.)
3. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կյանքը և փիլիսոփայությունը» խորագրով միջազգային գիտաժողովում (Հայաստան, Երևան, նոյեմբերի 22-23, *2016 թ.)*
4. Հեղինակի գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը*:* Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (որոնցից առաջինը կազմված է երկու ենթագլխից, երկրորդը՝ չորս ենթագլխից), եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը 125 էջ է:

Ներածության մեջ հիմնավորվել են հիմնախնդրի արդիականությունը, ներկայացվել է հիմնախնդրի տեսական մշակվածության աստիճանը, առաջադրվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթ պարունակող դրույթները, հիմնավորվել է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին՝ «**Ազգային ինքնության էպիկական տեսանկյունները**» գլխում ներկայացվել է էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնության պահպանման և արդիականացման գործընթացում:

«**Ազգային ինքնություն և էպոս: Էպոսի պատմական և առասպելական շերտերը**» ենթագլխում ներկայացվում է ազգային ինքնության հիմնախնդրի ընդհանուր բնութագիրը, պատմական զարգացման ընթացքում նրա էվոլյուցիան, ինչպես նաև ինքնության կառույցում էպոսի դերակատարությունը: Քանի որ ազգային ինքնության տարատեսակ ձևակերպումների առատությունը հաճախ ի հայտ է բերում որոշակի անորոշություն, շարադրանքի ընթացքում իմաստաբանական խառնաշփոթից խուսափելու համար լուսաբանվել են ազգային ինքնության վերաբերյալ հիմնական հայեցակարգերն ու մեթոդաբանական մոտեցումները: Ատենախոսության սույն ենթագլխում համառոտ ներկայացվել և վերլուծվել են մասնագիտական գրականության մեջ ընդունված ազգերի և ազգային ինքնության հետազոտման երեք մոտեցումները՝ *պրիմորդիալիստական*, *ինստրումենտալիստական* և *կոնստրուկտիվիստական*: Հիմնվելով ազգային ինքնության պրիմորդիալիստական մեկնաբանության վրա և ազգային ինքնությունը դիտարկելով որպես հարաբերականորեն կայուն և բնապատմական գոյացություն՝ ատենախոսության մեջ փորձ է արվել բացահայտել հայոց ինքնության արքետիպային դրսևորումները, որոնք գաղտնագրվել են էպոսում և հարյուրամյակներ շարունակ ավանդվել սերունդներին իբրև ինքնության յուրօրինակ «այցեքարտ»: Այսուամենայնիվ, նկատի է առնվել նաև այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում ինքնության կառույցն անընդհատ ենթարկվում է փոփոխությունների և համալրվում է՝ ի հայտ բերելով ինքնութենական դրսևորումների վերաիմաստավորման ու արդիականացման անհրաժեշտություն: Այս համատեքստում ազգային ինքնության հիմնահարցն ուսումնասիրվել է կոնստրուկտիվիստական հայեցակարգի լույսի ներքո, շեշտադրվել է ինքնության ազգային հարացույցի այժմեականության խնդիրը, ինքնության կառույցի նորացման, արդի քաղաքակրթական հիմնախնդիրների համատեքստում՝ ազգայինի և համամարդկայինի ներդաշնակ զարգացման և կենսունակ ինքնության կառուցարկման անհրաժեշտությունը:
Ատենախոսության սույն ենթագլխում հընթացս բացորոշվել և վերլուծվել են նաև էպոսի ժանրային հատկանիշներին, ծագմանն ու բովանդակությանը վերաբերող

հարցեր, մասնավորապես՝ ներկայացվել և վերլուծվել են էպոսի և առասպելի փոխհարաբերության վերաբերյալ գիտական գրականության մեջ գերիշխող մոտեցումները՝ պատմական և դիցաբանական դպրոցների ավանդույթները: Առաջնորդվելով համադրական մեթոդաբանությամբ՝ ատենախոսության մեջ հիմնավորվել է այն դրույթը, որ էպոսում պատմականն ու առասպելականը ներդաշնակ միասնության մեջ են և սխալ է հակադրել կամ ստորադասել դրանք միմյանց: Անշուշտ, դիցաբանական պատկերացումները կազմում են էպոսի հիմքը և սյուժեի զարգացման ընթացքում կարևոր դեր են խաղացել, արտացոլել էպոսաստեղծ ժողովրդի դիցաբանական աշխարհընկալումը, սակայն անհերքելի է նաև հավաքական ճակատագրի, պատմական իրադարձությունների ազդեցությունը: Էպոսի խորաքնին ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել պատմական գործոնը՝ չանտեսելով կամ չթերագնահատելով առասպելականը, դիտարկել դրանք իբրև էպոսի կազմավորման և զարգացման միանգամայն ինքնուրույն ու փոխլրացնող գործոններ:

Երկրորդ՝ «**Առասպելականի և պատմականի հարաբերակցությունը «Սասնա ծռեր» էպոսում**» ենթագլխում վերլուծվել է հայ էպոսագիտության զարգացման պատմական ընթացքը, ինչպես նաև հայկական էպոսը դիտարկվել է համաշխարհային էպոսագիտության պատմական զարգացման համատեքստում: «Սասնա ծռեր» էպոսը շուրթեշուրթ փոխանցվել է հնագույն ժամանակներից, սակայն գրառվել և գիտությանը հայտնի է դարձել միայն XIX դարի երկրորդ կեսին: Հայկական էպոսի ուսումնասիրությունները ևս ընթացել են պատմական և դիցաբանական դպրոցների հակադիր մոտեցումների համատեքստում, սակայն հարկ է նշել, որ դրանց բնորոշ չէր ծայրահեղ մերժողական դիրքորոշումը, ավելին՝ որոշ հեղինակների մոտ նկատվել են այդ մոտեցումների հաշտեցմանը միտված փորձեր: Հարկ է նկատել, որ հայկական էպոսում պատմությունը կարծես միահյուսված է առասպելին՝ ամբողջացնելով ռացիոնալ-ճանաչողականն ու հուզական-երևակայականը մեկ միասնության մեջ:

Երկրորդ՝ «**Բնազանցական-գոյաբանական ըմբռնումները և ինքնութենական արքետիպերն էպոսում**» գլխում հայկական էպոսը դիտվել է որպես ազգային ինքնության յուրօրինակ «հայելի», որում արտացոլվում են գոյաբանական, բարոյագիտական, արժեքաբանական գաղափարներ և ազգային ինքնության արքետիպային գծեր:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Գոյաբանական հարցադրումները հայկական էպոսում»** ենթագլխում ուսումնասիրվում է հայկական էպոսում արտացոլված բնություն-մարդ փոխհարաբերությանն աղերսվող գոյաբանական, մասնավորապես՝ ջրի՝ որպես գոյի նախահիմքի ու հիմնագոյացության, ինչպես նաև ջրի խորհրդանշանների մասին պատկերացումներն ու աշխարհայացքային դիրքորոշումները:

Թեպետ մարդկության պատմության ակունքներում կանգնած բոլոր ժողովուրդների պատկերացումներում էլ առկա է եղել ջրի, ինչպես նաև բնության մյուս տարրերի պաշտամունքը, սակայն հայկական էպոսում դրսևորված պատկերացումները թույլ են տալիս կարծել, որ դրանցում արտահայտվել են ոչ թե ջրի ուղղակի պաշտամունքը, այլ ստեղծարար, սուբստանցիոնալությամբ օժտված ջրի մասին գաղափարը: Հայկական էպոսի տարբեր դրվագներում հանդիպում են հրաշագործ ջրի մասին նկարագրություններ, որոնց վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոսքը ոչ սովորական ջրի մասին է: Հերոսի հրաշալի ծննդի մոտիվը լայն տարածում ունի համաշխարհային բանահյուսության մեջ: Հայկական էպոսն այս հարցում բացառություն չէ, բայց նրա հերոսները ոչ միայն ծնվում են ջրից, այլև զորանում են ջրով, հրաշագործ ջրի ակունքում կառուցում են իրենց տունը, հրաշագործ ջրի ավազանում որպես ընծա ստանում անպարտելի զենք ու զրահ, հրեղեն ձի և այլն: Նմանօրինակ մոտիվներ առկա են նաև այլ ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում: Սակայն հարկ է նկատել, որ հայկական էպոսում առկա է մի կարևոր հանգամանք, որն անտեսելու դեպքում գուցե եզրակացնենք, թե էպոսում ջրի թեմատիկան սոսկ դիցաբանական գիտակցության դրսևորման արդյունք է, մինչդեռ էպոսում հրաշագործ ջուրն ամեն անգամ արտասովոր ձևով հայտնվում է հենց «այլ ջրերում» և էպոսի հերոսները հստակորեն գիտակցում են այդ տարբերությունը: Էպոսում նկարագրվող հրաշագործ ջուրը միշտ դրսևորվում է «սովորական» ջրում (գետում, ծովում) և աներկբայորեն ընդգծվում է ստեղծարար ջրի որակական տարբերությունը: Էպոսի և ոչ մի դրվագում այդ ջուրը զատված, մեկուսի չի հայտնվում: «Սասնա ծռեր»-ում նկարագրվող ստեղծարար ջուրը որոշակի առումներով աղերսվում է թալեսյան ջրին: Հայկական էպոսում ևս ջուրը հորջորջվում է որպես հրաշագործ, անմահական, «ազնացորդիների» ջուր և օժտված է հրաշագործ, կենարար հատկանիշներով: Այսպիսով՝ «Սասնա ծռեր» էպոսում որոշակիորեն ուրվագծվում են ջրային տարերքի մասին հայ ժողովրդի հնագույն պատկերացումները, որոնք անուղղակիորեն աղերսվում են նաև փիլիսոփայության գոյաբանական խնդրակարգին և արտահայտվել են մարդ-բնություն անխզելի կապի մասին պատկերացումները:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Հայոց բարոյական նկարագիրը՝ ըստ «Սասնա ծռեր» էպոսի»** ենթագլուխը նվիրված է հայկական էպոսի բարոյական շերտերի վերլուծությանը, գլխավորապես՝ Սասունցի Դավթի՝ որպես հայի բարոյական հավաքական կերպարի քննությանը:

«Սասնա ծռեր» էպոսի գլխավոր հերոսներից Սասունցի Դավթի կերպարում մարմնավորվել է հայ ժողովրդի խիղճը, հերոսական ոգին, արդարամտությունն ու շիտակությունը, միով բանիվ, այն առաքինությունները, որոնք իմաստուն ժողովուրդը մեծապես կարևորել է իր բարոյական կերպարի ձևավորման համար: Հայկական էպոսի բարոյականության համակարգում առանձնահատուկ արժևորվում է խաղաղասիրությունը, որը ոչ թե դրսևորվում է «խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի (si vis pacem, para bellum)» տրամաբանության ձևաչափով, այլ խաղաղության՝ որպես մարդու անկապտելի իրավունքի, կյանքի

իմաստի, բարձրագույն արժեք լինելու տեսանկյուններից: Այս առումով Դավիթը թերևս ամենախաղաղասերն է էպիկական բոլոր հերոսներից, որը խաղաղության կոչերով է դիմում անգամ թշնամիներին, թեպետ նաև զգուշացնում, որ պատրաստ է ամեն գնով պաշտպանել խաղաղ ապրելու իր և յուրայինների իրավունքը: Նշված համատեքստում հատկանշական է այն, որ Դավթին խորթ է քինախնդրությունը, ավելին՝ նա ոչ միայն չի ատում իր թշնամիներին, մրցակիցներին, այլև կարեկցում է նրանց, մտահոգվում նրանց ճակատագրով: Նա անգամ իր հակառակորդներին չի ցանկանում տեսնել դժբախտ և իր երջանկությունը չի կարողանում լիարժեք վայելել, երբ ներքին կասկածներ ունի, որ այն կառուցվել է ուրիշի դժբախտության հաշվին. «Ավուտ մեկ Դավիթ ասաց.- Խանդութ,//Էն, ինչ ես քեզի բերի՝//Էն քառսուն փահլևանի մեղաց տակ ընկա.//Իմ խիղճ չի տանի՝ քեզի էնոնց ձեռքեն խլեցի// Տ'երթամ, գտնեմ էն քառասուն փահլևաններ,//Քառսուն ազապ աղջիկ պսակեմ վեր էդոնց»[2]: Հատկանշական է, որ Դավթի վարքագիծն էպոսում այս առումով նախադեպային չէ, այսօրինակ վարքաձև է դրսևորել նաև նրա պապ Սանասարը, ինչը թույլ է տալիս պնդել, որ էպոսի հերոսներն իրենց հակառակորդների նկատմամբ լցված չեն վրեժի զգացումով, այլ կարեկցում և ապրումակցում են նրանց: Ասվածի վկայությունն է այն միջադեպը, երբ Սանասարը չի ցանկանում Դեղձուն Ծամի հետ գաղտնի հեռանալ և խղճալով կախարդված ու ծերացած քառասուն փեսացուներին պահանջում է. «...Դու կը բերես, կ'արձակես էսա մարդեր,//Էն հասակին կը դարձուցես,//Ինչ հասակի էկած են[3]»: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ էպիկական հերոսների հոգեկերտվածքին բնորոշ են ոչ միայն խիզախությունն ու պատվախնդրությունը, այլև վեհանձնությունն ու մարդասիրությունը, որոնք դրսևորվում են թե՛ յուրայինների և թե՛ օտարների, մինչևիսկ՝ թշնամիների ու մրցակիցների հանդեպ: Էպիկական հերոսների վարքագիծն այս համատեքստում քննարկելով՝ պարզ է դառնում, որ նրանք առաջնորդվում են չարին բարությամբ հաղթելու բարոյական հրամայականով: Հայկական էպոսում ընդգծված կերպով ի ցույց է դրվում կեղծիքի, մատնության, ծառայամտության, վախկոտության նկատմամբ հայ ժողովրդի անհանդուրժողականությունը, որը ոչ մի արդարացում չի ընդունում: Ասվածի վկայությունն է այն դիպվածն էպոսում, որտեղ Դավիթը քեռի Թորոսին հայտնում է դևերին սպանելու և սասունցիների ողջ հարստությունը հետ վերադարձնելու լուրը, իսկ քեռի Թորոսը նրան չի հավատում և սպառնում է. «-Տղեք, էլեք էրթանք.//Որ սուտ էղավ՝ զԴավիթ կսպանենք»[4]: Այս միջադեպը հստակորեն ի ցույց է դնում ստի նկատմամբ ծայրահեղ մերժողականությունը: Մարմնավորելով հայրենիքի նվիրյալ պաշտպանի կերպարը՝ Դավիթը չի վերածվում արյունռուշտ և անգութ տիրակալի. նա քաջ մարտիկ է, որն անգամ ռազմի դաշտում առաջնորդվում է խղճի

---

[2] **«Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոսը»,** էջ 283:

[3] **Նույն տեղում**, էջ 90:

[4] **Նույն տեղում**, էջ 181:

թելադրանքով: Հայտնի ասույթը, թե պատերազմում բոլոր միջոցներն էլ արդարացված են, հայ դյուցազունների համար ընդունելի չեն եղել: Դավիթը հանկարծահաս չի պատուհասում թշնամուն, նա զգուշացնում է և հետո միայն հարձակվում: Դաժանությունն ու սառնասրտությունը բնորոշ չեն էպոսի հերոսներին: Հային ծանոթ չէ չարության ուրախությունը: Դավթի գթասրտության բացառիկ դրսևորման վկայությունն է էպոսի այն դրվագը, որտեղ նա արգելում է որսալ գերեվարված կենդանիներին: Նա անընդունելի է համարում թույլին, տկարին, գերուն վնասելը. բարձրագույն արժեքն ազատությունն է, որից մարդուն, մինչևիսկ կենդանուն զրկելը մեղք է համարում: Այսպիսով, Սասունցի Դավթի կերպարում արտացոլվել է նաև հայոց հոգեբարոյական նկարագրի մեկ այլ արքետիպային գիծ՝ ազատատենչությունը: Վերլուծելով էպոսի հերոսների վարքագիծը և բարոյական կերպարը՝ ատենախոսը եզրակացնում է, որ նրանք առաջնորդվում են բացառապես բարոյական պարտքի սկզբունքով: Այս հանգամանքը թույլ է տալիս կարծել, որ էպոսի հերոսները ոչ թե միամտաբար, անշրջահայացորեն չեն գիտակցում իրենց գործողությունների վտանգավորությունը, այլ այն, որ բարոյական սկզբունքները նրանց համար գերադասելի են ամեն ինչից և ընդունվում են անվերապահորեն՝ առանց դրանցից բխող հետևանքների կանխատեսման և արժևորման:

Երկրորդ գլխի՝ «**Անարդար աշխարհի և անմահ հերոսի (հավերժական հայի) մասին ըմբռնումները**» երրորդ ենթագլխում վերլուծվում է էպոսագիտության մեջ հայտնի «արդար աշխարհի մասին առասպելը», մասնավորապես՝ դիտարկվում է Փոքր Միհրի կերպարը՝ որպես անարդարության դեմ մարտնչող անմահ հերոսի: Փոքր Միհրը էպոսի ամենաառեղծվածային ու ամենահակասական կերպարներից է: Նրա հակասական էության դրսևորումներն ի հայտ են գալիս դեռ մանուկ հասակից. Միհրը կարծես մի մոլորյալ է, որն անվերջ որոնում է իր էությունը: Նա պայքարում է պարտադրված հանգամանքների դեմ, ի վերջո, մերժելով թելադրված խաղի կանոնները, փորձում է շեղել ճակատագրի անիվը և, առժամանակ հետաձգելով իր առկա գոյությունը, հեռանում է՝ պարփակվելով ինքն իր մեջ՝ ապագայում հաղթելու անխախտ մտադրությամբ: Այս առումով Փոքր Միհրի ժայռում փակվելը կարելի է որակել որպես *ինքն իր համար, ինքն իր մեջ գոյելու փասպ*: Միհրին ամենուր հետապնդում էր օտարվածության ու լքվածության զգացումը: Նա փորձում է փախչել անցյալից, սակայն իր ներկան ևս ոչ մի հուսադրող բան չէր խոստանում, կյանքը սոսկ դատապարտվածության մի զգացում է, որի դեմ Միհրը փորձում էր ընդվզել՝ ընդհուպ Աստծուց կռիվ պահանջելով: Նա իր վրա է կրում ողջ մարդկության հոգսը. անարդար աշխարհը փոխելու անզորությունը ստիպում է Միհրին հեռանալ այդ աշխարհից: Նա վերջինն էր Սասնա տան դյուցազուններից, որն իր մեջ էր ամփոփել նախնյաց էության «լույս ու մութ» կողմերը, սպասումներն ու հիասթափությունը. Փոքր Միհրն անցյալի և ապագայի հաշտեցման անվերջ խիզախում է: Կյանքի արհավիրքներին դիմակայած ազգի վերջին դյուցազունը չէր կարող համակերպվել և հնազանդվել իր դժխեմ ճակատագրին, իր ներսում կրելով այդ խռովքը և փակվելով Ագռավաքարում՝ նա լիովին օտարված չէ, արտաքին աշխարհը չի դադարել գոյություն ունենալ նրա համար: Պատմության տխուր դասերը յուրացրած հայը,

ենթարկվելով դաժան փորձությունների, այդուհանդերձ, չի դադարում հավատալ, նա կռիվ ունի այն աշխարհի հետ, որի հողը «ղալբացել» է, որում արդարության հաստատման անվերջանալի կռիվ ունի: Ցեղասպանություն վերապրած հայը ցայսօր այդ անարդար աշխարհից պահանջում է ճանաչում և հատուցում, բայց կարծես թե աշխարհը չի շտապում արձագանքել: Աշխարհի անարդար լինելու մասին էպոսում տեղ գտած պատկերացումները հուշում են հայի հոգեկերտվածքի առանձնահատկությունների մասին: Հայկական էպոսում մերժվել է արդար աշխարհի մասին առասպելը, քանի որ էպոսի վերջին հերոսը հենց այդ անարդարության զոհն է և ընդվզում է ներկա աշխարհակարգի դեմ: Սակայն այս առնչությամբ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ Փոքր Միհրը չի կորցնում իր հույսը, նա հավատում է աշխարհի բարեշտկման, վերափոխման գաղափարին՝ դրանով իսկ հույսի մի փոքրիկ շող թողնելով գալիք սերունդներին, պատգամելով միամտորեն չհավատալ աշխարհի արդարության մասին գաղափարին, բայց և չդադարել հուսալ նոր աշխարհակարգի հաստատման բաղձալի օրվան: Այսօրինակ մտայնությունը կրկին անգամ հաստատում է այն միտքը, որ հայի ներքին էությանը հատուկ է երկակիությունը, այն հակադրությունների անբացատրելի համադրություն է: Եվ այդ հախուռն ու անհամասեռ ոգու խռովքը չի հանդարտվում, քանի դեռ նա չի ըմբռնել իր էությունը: Նրա առժամանակյա բացակայությունը պարզապես հուսահատության արդյունք չէր, Միհրի ոչ-ը սոսկ մերժում չէր, այլ՝ ընդվզում, որի հիմքում ընկած է գոյապահպանման մղումը: Միհրի ընդվզումը մետաֆիզիկական էր: Էպոսն ասես մարգարեություն լինի հայի արյունոտ ճակատագրի մասին: Գուցե այդ է անմահության գինը, այդ մի կաթիլ արյունն էր, որ գուժեց Միհրի դաժան ճակատագիրը: Հայի սրտում դեռ չեն սպիացել մեկ դար առաջ կատարված արյունալի ոճրագործության վերքերը, սակայն ինչպես իր վերջին դյուցազունը, նա շարունակում է պայքարել, թեպետ հաճախ այդ պայքարը վերածվում է խռովքի, աշխարհից և նույնիսկ սեփական ինքնությունից հեռացման: Սահմանելով չարի և բարու մասին սեփական պատկերացումները՝ մենք մերժում ենք աշխարհի կարգը, այդ կերպ ինքներս մեզ դատապարտում ներփակ գոյության: Այս առումով հատկանշական է, որ ոչ թե անարդար աշխարհն է հերոսին նետում «կյանքի լուսանցքը», այլ հերոսն ինքն է հեռանում, մերժում անօրեն աշխարհն ու «գազանի բարոյականությունը»: Այսպիսով, Փոքր Միհրի կերպարն արտացոլում է հայի ապագայապաշտ ոգու խռովքը, նրա բողոքն ու ընդվզումն անարդար աշխարհի և իր հալածյալ բախտի նկատմամբ, միևնույն ժամանակ ցուցանում է սեփական գոյության շարունակականության անխախտ ընթացքի մասին հավատը:

Երկրորդ գլխի՝ **««Նիրհող» ինքնության և ինքնութենական գոյապահպանման արքետիպային դրսևորումները»** չորրորդ ենթագլխում քննարկվում են հայոց ինքնության արքետիպային գծերի դրսևորումներն էպոսում:

Հայ ժողովուրդը «Սասնա ծռեր» էպոսում արտահայտել է կեցության սեփական իմաստավորումները, որոնց հատուկ է եղել էկզիստենցիալիստական

ուղղվածությունը, մասնավորապես այն, որ մարդը բացահայտում է ինքն իրեն, իմաստավորում է իր կեցությունը սահմանային իրավիճակներում: Մահվան վտանգն ու ապագայի սարսափը հային ստիպում են օրհասի պահին ուշքի գալ և պայքարել: Զգալով պահի լրջությունը՝ հայն անմիջապես սթափվում է, այդժամ գիտակցում է ողջ եղելությունն ու կարծես գերմարդկային ուժեր ստանում: Այս է ապացուցում նրա դարավոր պատմությունը և այս է փաստում նրա էպոսը: 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը հերթական անգամ ապացուցեց հայի հերոսական ոգու անվերջանալի վերածնությունների իրողությունը: Շուրջ քառորդ դար առաջ պատերազմում հաղթած հայն այսօր էլ ապացուցեց աշխարհին իր հերոսական ոգու հարատևությունը: Սոցիալական բազմաթիվ խնդիրներով ծանրաբեռնված և իրեն բաժին հասած ճակատագրից դժգոհ հայն այս անգամ էլ ցույց տվեց, որ գոյության բնազդը նրա մեջ ամենավառ կերպով է արտահայտված:

Հայկական էպոսում քանիցս նկատվում է հայոց ինքնության մի վտանգավոր հոգեգիծ, որը կարելի է բնորոշել որպես «նիրհող ինքնություն»: Այն հանգամանքը, որ էպոսի հերոսներից պարբերաբար թաքցվում էին կարևոր գիտելիքներ, լինեն դրանք թշնամու նախաձեռնությամբ, թե յուրայինների «զգուշավորության» հետևանքով, փաստում է այն իրողությունը, որ անհաղորդ լինելով առկա խնդիրներին՝ հերոսները դառնում են առավել խոցելի: Եվ որքան էլ ուժեղ են Սասնա տան դյուցազունները, նրանց ուժը կարիք ունի ճիշտ ուղղորդման, մինչդեռ էպոսում նրանք միշտ մենակ են և անտեղյակ ամեն դավից (սոսկ երջանիկ պատահականությամբ է Դավիթը ժամանակ առ ժամանակ գաղտնիքներ բացահայտում արտատեր պառավի միջոցով): Ակամայից հարց է ծագում՝ ինչու՞ են մեր հերոսները հայտնվել իրադարձությունների լուսանցքում, ինչու՞ են նրանք դատապարտված այդ վտանգավոր անտեղյակությանը: Թերևս այս է էպոսում հնչեցված կարևորագույն ահազանգը, հարցերի հարցը: Ինքնաճանաչողության և արտաքին աշխարհի հետ հարաբերվելու այսօրինակ կերպը վերածվում է լուրջ սպառնալիքի, որի անտեսումը կարող է հանգեցնել ինքնութենական աղետի: Էպիկական հերոսները պարբերաբար հայտնվում են մի իրավիճակում, երբ նրանք ֆիզիկապես գոյություն ունեն, սակայն առկա է խզում նրանց և արտաքին աշխարհի միջև: Հավելենք նաև, որ հայոց «նիրհող» ինքնության վտանգավորությունն արտահայտվում է ոչ միայն իրականության անորոշ, ոչ ամբողջական ընկալման և առկա խնդիրներին ոչ համարժեք արձագանքման տեսանկյունից, այլև յուր անցյալի անքննադատ ըմբռնման, նրանից դասեր քաղելու պատրաստակամության բացակայությամբ: Եվ ի վերջո՝ հարց է ծագում՝ ինչպե՞ս է արդարացվում կամ պարզաբանվում այդ անտեղյակությունը, «նիրհող» ինքնության առեղծվածը: Կունենա՞նք արդյոք քաջություն հրաժարվելու Հովհանի և Վերգոյի զգուշավոր ու երկչոտ էությունից, թե՞ պիտի շարունակենք ապրել մեր հոգու «քարանձավում» և այն լքելու համարձակություն ու կամք չդրսևորելով՝ զոհաբերենք մեր Դավիթներին ու Միհերներին: Իրականության ու սեփական կեցության «խաբուսիկ» ըմբռնման հետևանքով պատմության անիվը նորից ու նորից է կրկնում իր շրջապտույտը:

Էպոսում հերոսները կարծես կորցրել են կյանքի զարկերակը և սթափվում են միայն սահմանային իրավիճակներում: Այսպես էլ հարյուր տարի առաջ իր նիրհից արթնացավ հայը, երբ գիտակցեց իր գոյության հիմքերի խարխլումը, նա ամենաաղետալի ժամանակներում վերստին կերտեց դարեր առաջ կորսված պետականությունը: Սոսկալի այդ ժամանակներում, երբ մի կողմից աշխարհի նոր քարտեզն էր գծվում, արևմտահայությունը ենթարկվել էր ցեղասպանության, մյուս կողմից բնաջնջման վտանգն սպառնում էր նաև արևելահայությանը, հայը գիտակցեց իր վիճակի օրհասական լինելը, յուր ապրել-չապրելու խնդրի լրջությունը, նրա մեջ կրկին արթնացավ գոյապահպանման ներուժը և իր պատմական հայրենիքի մի փոքրիկ պատառիկում նորոգեց իր հույսն ու վերգտավ կորցրածը, այդժամ խռոված և աշխարհից դառնացած Փոքր Մհերի հոգեգիծը ընկրկեց, հայը սթափվեց իր «ինքնութենական նիրհից», նրա մեջ կրկին արթնացավ Դավիթը, որը գիտակցեց իր էությունն ու ուժը: 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը խոսուն վկայությունն էին հայի անկոտրում հավաքական ոգու, որը դրսևորվում է հատկապես սահմանային իրավիճակներում, երբ զոհասեղանին գոյության հարցն է, լինել-չլինելու երկընտրանքը:

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսում գեղարվեստական և երբեմն էլ այլաբանական «ոճավորմամբ» արտացոլվել են հայոց «նիրհող» ինքնության և ինքնութենական գոյապահպանման բնազդի վրա խարսխված կեցութաձևի արքետիպային գծերը, որոնք կարոտ են արդի շարժընթացների լույսի ներքո իմաստավորման և արժևորման: Թերևս, միայն սեփական ինքնության հետ առերեսվելու խիզախումը հնարավորություն կընձեռի այն առավել մրցունակ ու ճկուն դարձնելու, ինչպես նաև անցյալից դասեր քաղելու և ապագայի մարտահրավերներին դիմակայելու դժվարին գործում: **«Եզրակացության»** մեջ ամփոփվել են ատենախոսության հիմնական դրույթները, կատարվել են մի շարք ընդհանրացումներ, որոնց հիմքի վրա արվել են հետևյալ եզրահանգումները՝

- «Սասնա ծռեր» էպոսի բարոյականությունը սերտորեն աղերսվում է դեոնտոլոգիական (պարտքագիտական) և առաքինությունների բարոյագիտության սկզբունքներին, որտեղ առաջնային են բարոյական պարտքը, առաքինությունները և ոչ թե դրանցից բխող հետևանքների արժևորումները:
- «Սասնա ծռեր» էպոսում ուրվագծվել են հայ ժողովրդի աշխարհճանաչողության համակարգի հիմնական ցուցիչները, գլխավորապես՝ էպոսի առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղում տեղ են գտել փիլիսոփայության գոյաբանական խնդրակարգին աղերսվող պատկերացումներ, մասնավորապես՝ ջրի՝ սուբստանցիոնալությամբ օժտված լինելու մասին ակնարկներ:
- «Սասնա ծռեր» էպոսում արտահայտվել է անմահության վերաբերյալ հայերի համոզմունքը (հավերժական հայը), որը դրսևորվում է որպես հայոց հոգեկերտվածքի արքետիպային գիծ:

➢ «Սասնա ծռեր» էպոսում դրսևորվել է հայոց հոգեկերտվածքին հատուկ մետաֆիզիկական ընդվզման արքետիպային գիծը, որը բնորոշվում է ոչ միայն սեփական ճակատագրի, այլև ողջ աշխարհակարգի մերժմամբ:

➢ Հայկական էպոսն ուսումնասիրելով էթնոհոգեբանության մեջ հայտնի «Արդար աշխարհի մասին առասպելի» համատեքստում՝ ցույց է տրվում, որ հայոց հոգեկերտվածքին խորթ է այդ գաղափարը, քանի որ Փոքր Միհերի ճյուղում (թեպետ անարդարության հարցն արծարծվում է նաև էպոսի այլ ճյուղերում) հայոց վերջին դյուցազունը մերժում է գործող աշխարհակարգը՝ այն հռչակելով չար և անարդար:

➢ Հայկական էպոսի հերոսների օրինակով վերհանվել է հայոց հոգեկերտվածքի այն արքետիպային գիծը, որին հատուկ է իրականության այնպիսի ընկալումը, երբ հերոսները չեն գիտակցում դեպքերի ու իրադարձությունների զարգացման միտումները, քանի դեռ դրանք վերահսկելի են: Այդ հոգեգիծն ատենախոսության մեջ բնորոշվել է իբրև «նիրհող ինքնություն»: Հայտնվելով սահմանային իրավիճակում՝ հերոսները սթափվում են և հընթացս դրսևորվում է հայոց ինքնութենական գոյապահպանման ներուժը:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշված դրույթներն ու եզրակացությունները, կարելի է նշել, որ «Սասնա ծռեր» էպոսն իր մեջ ամփոփել է հայոց հոգեկերտվածքի մի շարք արքետիպային գծեր, որոնք, հարյուրամյակների ընթացքում սերնդեսերունդ փոխանցվելով, ինքնութենապահպան գործառույթ են կատարել, ավելին, դրանք չեն կորցրել իրենց այժմեականությունը նաև մեր օրերում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Էպոսի և առասպելի փոխհարաբերության հարցը, «Փիլիսոփայության պատմություն և արդիականություն», «Լիմուշ» հրատ., Եր., 2011, էջ 78-88:
2. Էպոսը որպես ազգային ինքնության բացահայտիչ, «Փիլիսոփայության պատմություն և արդիականություն», «Լիմուշ» հրատ., Եր., 2012, էջ 85-92:
3. Սասունցի Դավթի բարոյական նկարագիրը հայոց ինքնության համատեքստում, «Հայոց ինքնության հարցեր», № 2, «Լիմուշ» հրատ., Եր., 2014, էջ 109-123:
4. Փոքր Միհեր. ընդվզող, թե՞ օտարված հերոս, Իմաստություն, «ԹԱՍԿ» ՍՊԸ, Եր., 2015, էջ 171-177:
5. EPIC AS A DETERMINANT OF NATIONAL IDENTITY, Conference of the International Journal of Arts & Sciences, Vienna, 2015, p.163-166.
6. ONTOLOGICAL PROBLEMS IN THE ARMENIAN NATIONAL EPIC, «Wisdom», ASPU press. Yerevan, 2017, p. 101-106.
7. Հայոց ինքնության արքետիպային գծերի դրսևորումները հայկական էպոսում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, ԵՊՀ հրատ., Եր., 2017, էջ 401-406:

ГАРИБЯН АРУСЯК АЛИКОВНА

«Проявления армянской идентичности в эпосе «Сасна црер»

(философский анализ)»

Диссертация на соискание учёной степени кандидата философских наук по специальности 09.00.01 “Философия”
Защита состоится 26 июня 2019 года в 13:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г. Ереван, улица Абовяна 52а, Ереванский государственный университет

Резюме

В современном мире, с одной стороны, создаются широкие возможности для беспрепятственных дискуссий между культурными, социально-политическими и экономическими системами, что способствует преодолению социально-культурных преград и сближению различных ценностных систем, но, с другой стороны, эти перемены создают новые проблемы с точки зрения сохранения национальной идентичности. Трансформации морально-этических систем, тенденции создания общей платформы универсальных ценностей одновременно являются угрозой сохранения национальной идентичности. День ото дня усугубляются этнические и религиозные конфликты. Кризис идентичности заметен повсюду, хаос всеобщих перемен и трансформаций способствует его распространению. В этом контексте "Я" больше, чем когда-либо, нуждается в содействии и помощи "Мы". Таким образом, рефлексии собственного бытия становятся необходимостью. Наилучшими способами познания и оценивания особенностей национальной идентичности выступают поиски "истинного" бытия, что, в свою очередь, способствует гармоничному развитию национального в контексте общечеловеческого. Как известно, система национальной идентичности многомерна и включает в себя разные компоненты, в числе которых важную роль играет историческая память, плетущая "паутину" идентичности. В исторической памяти укрепляются не только события прошлого, но и их специфическое восприятие и осмысление. В частности, речь идет не только о летописи, но и об устной истории, каждому из которых свойственна специфическая форма сохранения и осмысления идентичности. Устная память, выступая в виде культуры, наилучшим образом отражает все то, что выпало из летописания. В этом контексте неоценима роль фольклора, в частности, эпоса. Принимая во внимание вышесказанное, в диссертационной работе специальным предметом исследования является армянский народный эпос "Сасна црер" ("Сасунские удальцы"), который столетиями передаваясь следующим поколениям, выступал в роли своеобразного "удостоверения" идентичности. В народном эпосе отразился коллективный образ армянского народа со всеми его внутренними противоречиями и особенностями. В

образе эпических героев диалектика душевного склада армянина проявилась в мифологических сюжетах и аллегорических смыслах, которые жаждут расшифровки и комплексного исследования. В армянском эпосе выразились основные положения морально-этических и ценностных систем, были затронуты гуманистические проблемы, актуальность которых высвечивается в контексте современных процессов. Армянский эпос является гармоничным сплетением мифологического и исторического, заключая в себе не только эмоционально-творческое восприятие мира, но и особенности рационально-познавательного понимания реальности. В эпосе также нашли отражение архетипические черты армянской национальной идентичности, которые в диссертационной работе характеризуются как "спящая идентичность", архетип самосохранения идентичности, вера в вечное самобытие (вечный армянин). Также в эпосе опровергается миф о "справедливости мира". Таким образом, можно отметить, что армянский народный эпос заключает в себе архетипические черты армянской идентичности, которые, передаваясь из поколения в поколение, выполняли функцию сохранения идентичности, более того, они не потеряли свою актуальность и в наши дни.

GHARIBYAN ARUSYAK ALIK

"MANIFESTATIONS OF THE ARMENIAN IDENTITY IN THE EPIC "SASNA TSRER (PHILOSOPHICAL ANALYSIS)"

Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01 Philosophy
The defense of the dissertation will be held on 26 June 2019, at 13:00 at Yerevan State University at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty
of HCC 013.
Address: 0025, 52a Abovyan str., YSU.

SUMMARY

In the modern world, on the one hand, there are wide opportunities for free discussions between cultural, socio-political and economic systems that in turn promote overcoming welfare barriers and rapprochement of various value systems, but on the other hand, these changes create new problems in terms of maintaining national identity. Transformations of moral and ethical systems, trends of creation of a general platform of universal values at the same time become the serious threat for maintaining national identity. The ethnic and religious conflicts straighten day by day. Crisis of identity is noticeable everywhere: the chaos of global changes and transformations promotes its distribution. In this context "I" more than ever needs assistance and the help of "We". Hence, reflections of own life being become a necessity. The search of "true" life being as an act of the best way of knowledge and estimation of features of national identity which in turn contributes to the harmonious development of the national in the context of universal. It is known that the system of national identity is multi-dimensional and includes in itself a myriad of components among which is the historical memory which is forming the "web" of identity. In the historical memory are reflected not only events of the past, but also their specific perception and comprehension. In particular, it is not only about the historiography but also about oral history, which is a unique form of comprehension and preservation of identity. Oral memory, acting in the form of culture, in the best way reflects the events which are slipped from the field of historiography. In this context the role of folklore is invaluable; particularly the role of a national epic. In view of the aforesaid in the dissertation work the special object of research is the Armenian national epic "Sasna Tsrer" ("Daredevils of Sassoun") which is being transferred to the next generations by centuries orally acted as a peculiar "certificate" of identity. In the national epic, the collective character of the Armenian people was reflected with its all internal contradictions and features. In the figures of epic heroes are reflected the dialectics of

the temper of Armenian people which were shown in mythological plots, allegorical meanings that are eager for interpretation and complex research.

In the dissertation work, the archetypical patterns of the Armenian national identity have been characterized as "the sleeping identity", the archetype of self-preservation of identity, belief in the eternal self-life being (the eternal Armenian), metaphysical revolt, etc.

In the Armenian epic are expressed the basic provisions of ethical and value systems, humanistic issues which relevance is highlighted in the context of modern processes. The Armenian epic is a harmonious texture of mythological and historical, which illustrates not only the emotional and imaginary perception of the world but also features of a rational understanding of reality.